

ՊԱՅՄԱՆՔ


ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.
Կեսամյակայ 6 Ֆր.
ԱՐՏԱՍԱՀԱՆ
Երկու քիչ և մեծ ծրարով
Տարեկան 14 Ֆր.
Կեսամյակայ 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլ.
Կեսամյակայ 1.50 Տոլ.
ԿԱՆԻՍԿ

ՄԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



Լ Ր Ա Վ Ի Ր

Ա Ջ Չ Ա Յ Ի Ն Ե Ն Ք Ա Ղ Ա Վ Ա Ք Ա Վ Ա Ն

Ը Ն ՄԱՏԵՐԱՆՈՒԹ ԵՍԵՆ ՉՈՐԵՔԵՐԱԹԻ Ի Ի ՇԱԲԱԹ

Redaction du Journal

«Ira vounk»

(Bulgarie) VARNA

Редация

на ВѢСТНИКЪ

«Иразункъ»

ВАРНА

Իրաքիսիք-ին չեն տրոսիր

ՄԵՆ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ
ՍՕՖԻԱՅԻ



ԵՐԱՇԽԱՆՈՐԵԱԼ ՊՈՒԼԿԱՐ
ԿՈՒԱՎՐՈՒԹԵՆԵՆ

Առաջին կարգի նոր առժամեր հասած են եւ պիտի քաջութիւն փետրուար 15ին: Շահող թիւերու վճարումը վայրկեանական Պաշտօնեաներու համար վճարման դիւրութիւն կը տրուի մինչեւ աւագուրիս:

Բաղդադին փորձելու զոգնները ամենայն վստահութեամբ թող դիմեն առ

ԱԼԵՔՍԱՆ ԳՈՒՅՈՒՄՉԵԱՆ Եւ
ՎԱՀԱՆ ՊԱԼԹԱՋՈՐ

Անգանաւոր Պալք-Բաղար

ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ
ԳՕՆԿՐԵՆ

Դ.

Մեր վերջին երկու թիւերով արտատպուած Օսմ. Երեսփոխանական Ժողովոյ 1878ի նիստերու արձանագրութիւնները բաւական են ապացուցանելու թէ օրինազանցութիւնը իր ուղը ու ծածը բանած թուրք պաշտօնէութիւնը Սատրապմէն սկսեալ, մինչեւ յետին օստիկանը, չողովի ինքն իրով, Օրէնքի խտտագոյն յօդուածներ, բաւլրմանական ճառեր, հանրագրութիւններ ու թագրիրներ եւ նոյն իսկ դիւանագիտական դիմումներ ու դիւանական ծանուցագիրներ անշոք կը մնան ու եւ ձեռով կազմուած թուրք պաշտօնէութիւն մը ուղղութեան բերելու, եթէ անոր չընկերանայ Բ. Դանէն անկախ եւ օտար պետութեան մը հովանաւորութիւնը վայելող հրահանգներու ուղղակի գործակցութիւնը:

Թուրք տարրին հագեցանութիւնը մօտէն ուսումնասիրողները, երկար ժամանակ անոր մէջ միասին ապրողները միայն կրնան սերտած ըլլալ այդ մոլեռանդ ժողովուրդին այս տկար եւ անտրբ բազմութիւնը: Թուրքը միայն երրորդական տեղ կուտայ դրական օրէնքներու, իսկ անոր սըր-

տին մէջ անչնչեթօրէն գրգռուած են Ղուրանի սկզբունքները, որոնք երբէք չեն ներեր ոչ մահմանականներու հետ հաւատարմութիւն եւ եղբայրակցութիւն: Կովկասի թուրքերը՝ որ բազմաթիւ աւելի զարգացած են քան Հայաստանի թուրքերը այս ճշմարտութիւնը անկամ մըն ալ չը հաստատեցին անցեալ տարուան իրենց վայրագութիւններովը հայոց դէմ, երկրի մը մէջ որուն քրիստոնեայ պետութիւն մը կը տիրէր, բայց բաւական եղաւ թուրքոյ սահմանակից ըլլալին եւ անպատիժ մնալու յոյսը ունենալին: Եւ ասոր հետք շատ իրաւացի կերպով բոսք է կլաւթանը՝ լեթէ կուլէք թուրքերը բարեկարգելու միջոցովը առէք անոնց ձեռքէն կամ սուրբը:

Թուրքոյ մէջ սահմանադրութեան օրէնքին գործադրութեան գրգռութիւն մեծ բաներ սպասող միամիտները, եթէ ուսումնասիրած ըլլան թուրքոյ արդի օրէնքները, թէ՛ դատական եւ թէ՛ վարչական, հոն պիտի տեսնեն իւրաքանչիւրէն յառաջագիտ ազգերու օրէնքներուն ընդօրինակութիւնը մեծաւ մասամբ բայց մէկը կրնա՞յ ըսել թէ թուրք դատարաններու մէջ արգարութիւն կը տիրէ, երբ ման աւելորդութիւն մահմանականի մը եւ քրիստոնեայի մը միջեւ կը դառնայ թէեւ դատարանին մէջ պտուղին 1—2 քրիստոնեայ անգամներ, որոնք պարտաւորուած են կենդանի դիակներ ձեւանար մահմանական պետութեան բարձրագոյն պաշտօնէութեան հրահանգներուն առջեւ, ինչպէս երկար տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող դատական ու վարչական գեղեցիկ օրէնքները ապարդիւն մնացած են Օսմ. պետութեան մէջ, նոյնպէս ալ օսմ. սահմանադրութիւնը իր երկ ու տարուան գործադրութեամբը ապարդիւն եւ անհետեւանք մնացած է՝ ասկէ երեսուն տարի առաջ՝ երբ նշտաւոր վէպիրներ ու նախարարներ ալ կառավարութեան գլուխը

կը գտնուէին: Հետեւապէս երազմըն է ժէօն թուրքերու այն երեւակայութիւնը թէ սահմանադրութիւնը գործադրութեան գրանցով թուրքիան կը բարեկարգի եւ օրէնք ու հաւատարմութիւն կը տիրէ:

Սա կէտին պէտք է լաւ համոզուինք թէ հաւատարմութեան սկզբունքը էն լուսամտի կարծուած ժէօն թուրքերուն քով կեղծիք մը ըլլալէ անդին չանցնիր, եւ մենք պէտք չէ անոնց բերանին մէջ թաղող այդ բառէն խաբարին: Թուրքոյ լուծէն ազատած երկիրներու այժմ քրիստոնեայ կառավարութիւնները տեղացի թուրքերուն հաւատարմութեան ամէն իրաւասութիւն իրապէս տուած ըլլալով հանդերձ, չեմ հանդիպած ժէօն թուրքի մը որ պո՛ւ աչքով նայի այդ ամէնի վերայ, որովհետեւ որդ մը կայ անոնց սրտին մէջ որ կը կրծէ չառնակ՝ եւ այդ որդը Ղուրանով ծնունդ առած ու մոնկոլեանց ցեղային աններողութեամբ տեղաւորուած որդն է, որ ստուգեալանէ միշտ խալիֆա ու լիթանականութեան անկախ գոյութեանէն:

Եւ մասնակ թէ Հայերս ցարդ մեր Լափած արիւնով լիճեր կաղամած ըլլալէ յետոյ, ասկէ անդին ալ այլ խալիֆա ու լիթանականութեան անկախ գոյութիւնը եւ այդ պետութեան ամբողջութիւնը պահպանելու համար մեր մը նապած արիւնն ալ թափելու կամ թափել տարածադրուելունք եղեր ըստ Դաշնակցութեան քանի մը չէֆերու: Եթէ ազգային կամ գոնէ տեղական ինքնավարութիւն կը զլացուի մեզ, մենք ի՞նչ պէտք ունինք կրօնքով մեզ թշնամի եւ քաղաքականապէս սկիզբէն ի վեր մեզ հարստահարող թուրք կայսրութեան ամբողջութիւնը պահպանելու համար մեր մնացած արիւնն ալ թափելու: Եթէ Դաշնակցական պիտեք յուսահատուած են հայիական նահանգներուն ինքնավարութիւնը ձեռք բերելէ, գոնէ հայ ասարը բոլորովին բնայնջելու վտանգին տանող անիմաստ ողջ լուծներու միջիւն չափ անխիղճ թող չըլլան:

ՊՈՒԼԿԱՐԻՈՑ ԿՐԹԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

Այս տարի Սոփրանիէին մէջ բոլորն իրհարանութիւններէ յետոյ, վերջապէս միմիայնութեան ճոխով ընդունուած կրթական նոր օրէնքին ձեւաւոր վարժարաններուն վերաբերեալ եւ մեզ չհազարգող յօդուածները հարկ կը դատենք մեր ընթերցողներուն ծանոթացնելու: Օրէնքը ամբողջութեամբ հրատարակուած է պետական պաշտօնական թերթին յունվար 9 թիւին մէջ:

Յօդ. 145—Նախ եւ առաջ կրթական նախարարութեանէն չարտօնուած մասնաւոր վարժարան չէ կարելի բանալ:

Յօդ. 146—Կրթ. նախարարութիւնը իր էնթերթիքներուն (կրթ. Տեսուչ) միջոցաւ բոլոր մասնաւոր վարժարաններուն վրայ կը հսկէ:

Յօդ. 147—Կրթ. նախարարութեան զիտողութեանց հակառակ վարժող Մասնաւոր վարժարաններ անմիջապէս կը գոյնն:

Յօդ. 148—Մասնաւոր վարժարաններու մէջ աւանդուած ուսումները ու գիտութիւնները եւ կրթութեան դասերը մանկավարժութեան պայմաններուն համաձայն ըլլալէ զատ, բարոյական, ապացուցեալ ճշմարտութեանց օրէնքի եւ տեղական կառավարութեան սկզբունքներուն համապատասխան պէտք է ըլլան:

Յօդ. 149—Լիւծին տեսակ մասնաւոր վարժարաններ հաստատելու կարելի ըլլալէ զատ, ծրագրերը տեղական կառավարութեան վարժարաններու ծրագրերուն նման կամ տարբեր կրնան ըլլալ:

Յօդ. 150—Մասնաւոր վարժարաններու մէջ ուսուցման լեզուն պիտի լինի կամ ուրիշ լեզուներ կրնան ըլլալ: Միայն թէ այս վարժարաններու մէջ ուսանող պուլկարանապետները յոյ պաշտօնական պուլկար լեզուն պատմութիւնը եւ աշխարհագրութիւնը գիտնալը պարտաւորիչ է:

Յօդ. 151—Մասնաւոր վարժարանքանալու եւ վարելու եւ կամ մասնաւոր վարժարաններու մէջ ուսուցչութիւն ընելու նպատակ ունեցող մը նախ պարտի նահանգային կրթական Տեսչին ներկայացնել թուղթեր, ոպտացուցանող իր իրաւասութիւնը վարժարան բանալու, յայտնող իր ուսման աստիճանը եւ մինչ ցայն վարժարան տնտեսականութեանց վկայութիւնները եւ ուրիշ կարգ մը վաւերացողութիւն: Եւ եթէ անիկա օտարական ուսուցիչ մըն է, իր պաշտօնավարած երկրին կրթական նախարարութիւնէն իբր պատիժ պաշտօնական եղած չըլլալը ապացուցանող վկայական մըն ալ ներկա:

յացնելը հարկ է: Կրթական Տեսուչը այս թուղթերը վաւերացնելու համար կրթ. նախարարութեան կը դրկէ: Եւ նախարարութեան վաւերացնելուն յիշեալ թիկնածուն գործի կրկնի:

Յօդ. 152—Մասնաւոր վարժարանները չըլլան տարաւազակերտները եւ ուսանողները բոլորին յիշուածին չը տուած չեն վ. յիշելու պաշտօնական վարժարաններու աշակերտաց վայելած իրաւունքները: սակայն իրենց ծրուագրին դասերը պուրկար լեզուաւ աւելցող մասնաւոր վարժարաններու աշակերտները իրաւունքները վարժարանէն համար՝ կրթ. նախարարութեան կարգուած յիշելու կողմէն իրենց վարժարաններուն մէջ կը քննուին: Կրթ. նախարարութեան այս մասին հրաման կուտայ հետեւեալ պարագաներու տակ.

Ե. վարժարանը նախակրթարան եւ երկրորդական ըլլալով, եթէ կարգը եւ ձիւղերը ամբողջ գոյութիւն ունենան:

Բ. եթէ յիշեալ վարժարաններ, եւ ըլլան նախակրթարան, ըլլան երկրորդական— ծրագրները համապատասխան ըլլան պաշտօնական վարժարաններու ծրագրին:

Գ. եթէ այս վարժարաններու մէջ գաստանդարտները կրթ. նախարարութեան էն ընդունուածը եւ վաւերացուած ուսուցիչներու ձեռքը ըլլան: Նախակրթարաններու եւ երկրորդական վարժարաններու նշանակութեանը համար կարգուած չքննիչ յանձնարարութիւն իբր վարձք պէտք է վճարել իւրաքանչիւր կարգի համար 10 ֆրանկէն 30 ֆր. եւ կամ մէկ մի աշակերտի համար 5 ֆր:

Յօդ. 153—Մասնաւոր վարժարաններէն իւրաքանչիւր իրեն դասաւանդութեանց յատուկ գործիքները եւ անոնց կարգը ունենալու են:

Յօդ. 154—Մասնաւոր վարժարաններու մէջ գործածուած ու յարմարուած գործիքները ու գաստանդարտները տարկաները կրթ. նախարարութեան վաւերացուած եւ թիկնածու ըլլալու են:

Յօդ. 155—Կրթ. նախարարութեան թոյց տրուած եղանակաւ մասնաւոր վարժարաններու վարիչներուն տնօրէնութեան տակ գտնուող վարժարանաց վարչական գործերուն եւ մասնաւորապէս աշակերտաց եւ ուսուցիչներու վիճակի մասին ամէն տարի նոյն շաբաթարարութեան տարեկան հաշիւ եւ տեղեկագիրները գրկել անհրաժեշտ է:

(Շարունակելի)

ԹԻՐԻ ԲԱՐԼԱՄԵՆՏԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԵՌՈՇԵ ՆԻՍՆԵՐ



Օսմանեան երեսփոխանական ժողով

Օսմանեան երեսփոխանական ժողովոյն անդեալ շաբաթ աւուր նիստին մէջ Հաղպի երեսփոխան Սաւաճեան Մանուկ եփեմէն հետեւեալ ատենաբանութիւնը արեւ:

Ամէն մարդ զիտէ թէ Ռուսիոյ տէրութիւնն արեւելեան քրիստոնէից իրաւունքները պաշտպանելու պատճառաւ այս պատերազմական տագնապը մեր վրայ հանեց: Աշխարհի առջեւ խոտաացած էր որ երկրի ամբողջութեանը պիտի չը դպչէր: Ուրիշ տէրութեանց ալ իւր ալ դատողութիւնն յայտնած էր: Արդ տոյն ժողովի կազմութեան հետեւ պէտք եղած քարեկարգութիւնները մեր հայրենակցաց հետ ձեռք ձեռքի տուած գործադրելով այլ եւս մեր նպատակին հասնելու վստահ ըլլալինս անդեալ տարի ամենուն յայտարարեցինք, որովհետեւ վեհ. Սուլթան իւր տէրութեան բոլոր հպատակներուն իրաւունքը եւ ազատութեան մասին հաւատարմութիւնն արդարութեան կանոնաց համաձայն գործադրելու համար Օսմանեան թիւնը չը նորոգեմք: Հետեւաւոր մեր երկրին մէջ պատահած աւկարգութեան առաջին անգամ համար, այսօր իսլամ եւ քրիստոնէայ ամէնքս միացած, մեր հայրենացիքի կրօնական եւ բարոյութեան համար ամենայն ջանատուութեան ամէն քան կը խօսինք եւ դործագործեանն աշխատելու վրայ ենք: Սակայն այս օրերս լրագրաց մէջ կը տեսնենք որ Ռուսիոյ տէրութիւնն իբր թէ մեզ յաղթած ըլլալուն համար մեր տէրութեան հպատակ սլավոքիստոնէից համար ոչ միայն բարեկրօնագում ալ նաեւ անկարգութիւն կը պահանջէ: Կրնայ ըսուել թէ այս պահանջ մանց մէջ քանին զեպպահարդրին առաջարկութիւններն են: Բայց Հայաստանի սահմաններն ուղղելու խնդիրն ուսկէց երեւան եկած է: Կը հարցնեմ ձեզ, արդեօք այս զեպպահարդրին առաջարկութիւններէն է: Այս հարցման վրայ հայրենիք պատասխանէ ոչ. ահա այս տեղ Ռուսիա իւր աշխարհակալութեան փափաքն երեւան հանց:

Գրեմք, Տիարք, որ Հայաստանի մէջ մեր իսլամ եղբայրներէն զատ 500,000 էնալ աւուրիկայի գտնուելի Պատմութիւններ իսկ ցոյց կուտան թէ այդ Հայերը, 4-500 տարեէ ի վեր,

ամէն պատերազմաց եւ ուրիշ պարագայից մէջ ամէն տառապանաց համարեւելով: Եւ ուրիշ երկիր չը դադարելով զիմացած են: Այս անգամ ալ պատերազմին առթիւ իսկ մը վայրագ քիւրտեր ալ հայոց թէ ինչիցն եւ թէ կենաց թաղում վնաս հասցուցին, բայց եւ այնպէս հայերն իրենց վիճակն օտարին չը յայտնելով, ամբողջ Օսմանեանց վեհապետին հովանաւորութեան ներքեւ Օսմանեան թիւնը միջոցաւ ապագայն մէջ ձեռք բերուելիք քարտուղեան եւ իրենց հայրենակցաց հետ հաւասարութեամբ եւ բարեկամութեամբ ապրելու յուսով իրենց հայրենակիցներուն նիւթապէս եւ բարոյապէս բոն չիղան, այլոց պէս ուրիշ տեղեր չը գաղթեցին: Եւ Պոլսկարաց նման Ռուսիոյ մեքենայութեանց չը խառնեցան, այլ ամենայն հաւատարմութեամբ ծառայեցին երկրին եւ աւերութեան, քնաւ երբէք ապստամբեցան, քնաւ երբէք արեւելի թիւնն պատճառ չեղան: Այդպիսի հնազանդ, զիտութեան արժանի եւ տէրութեան հովանաւոր ներքեւ մնալու փափաքող պարկեշտ ժողովուրդ մը Ռուսիոյ պէս բռնապետ իշխանութեան մը ներքեւ տեղեկու պէտք է հարկադրել: Կա նի որ ասոնք իրենց եղբայրներէն չը բաժնուելու համար քանք չը խնայեցին, մեր պարտքն է այդ դժբախտներուն ցաւոց դարան փնտռել:

Այնպիսի տատակար պէս ժողովուրդ մը ձեռքէ հանելու եւ Պոլսկարաց պէս սուլունոր ժողովրդեան մը անկարգութիւն տալու վտանգին առջեւ, ժողովիս մէջ գտնուող Հայ ընկերներու հետ ի միասին յանուն Հայաստանի կը յայտարարենք թէ, եթէ Ռուսիոյ տէրութեան պատերազմական ծախք վճարել հարկ ըլլայ, խնդրենք վեհ. Սուլթանէն որ լրագրաց ըսածին նման Հայաստանէն երկիր չը տրուելով, տեղը դրամ վճարուի. եւ եթէ այս անհնար ըլլայ, մեր բողոքն յանուն ազգին բարեկամ էջրութեանց ոչ չաղորդեմք ներկայացուի: Իսկ եթէ անպատճառ Ռուսաց հող տալ հարկ ըլլայ, կը խնդրենք որ Հայաստանէն չը տրուելով տէրութեան ամէն մասնակ տազնապ պատճառող կողմերէն տրուի:

Սաւաճեան Մանուկ էֆենտի յոյն ատենաբանութեան եղբայրներէն ժողովին հաճութեամբ կայսերական կատաւարութեան յղուեցաւ:

«Մատիս» թիւ 2078, 17 յուն, 1878
Երկրի Ձայն

ԳԱՀԱՃԱՌԸ

Անգլիոյ խորհրդարանին բացումը ամթիւ ըստ աւանդական սովորութեանց մեծաւ հանդիսաւորութեամբ թագաւորը թագուհին հետ խորհրդարան առաջնորդուելով, կարգաբացման գահաճառը:

Նստի Գերմանիոյ կայսեր ու կայսրուհոյն այցելութիւնը յիշելով, այս ինձ եւ թագուհին մեծ հաճոյք պատճառեց ըստ: «Եւ իմ ժողովուրդն ցոյց տուած սրտագին ընդունելութիւնը դնահատուած է նոյնին վնաս փառութեանց կողմէ եւ պիտի ամապնդէ այն բարեկամական կապերը որ կը միացնեն երկու ազգութիւնները: Յետոյ իր ցաւակցութիւնը յայտնելով Շուէտի թագաւորին մահուանը առթիւ «Օտար պետութեանց հետ իմ յարաբերութիւնները, ըստ, կը շարունակեն գերազանց ըլլալ: Իմ կատարարութիւնս անկեղծօրէն ցանկացող ըլլալով Մեծն Բրիտանիոյ եւ Ռուսիոյ շահերու մասին ստիպան ցամաքին վերայ կարգ մը խնդիրներու մէջ յարատեւ համաձայնութիւն կայացնելու, կընեցող առաջակալ կատարարութեան հետ զաշնադրութիւն մը ինք փոխադարձ շահերուն նպատակաւ: Պարտականութիւնս իմ կատարարութեանը, ըստ, կը շարունակեն: Այս զաշնադրութեան պարտականութիւնները արդէն ձեզ ներկայացուած են եւ երկու կատարարութիւնները ալ հաւամաձայնութեան ոգւոյն համեմատ վարուելով, յաջողած են խաղաղութիւնը պահպանել, հակառակ Պարսկաստանի խռովութիւններուն ու բարդութիւններուն: Իմ կատարարութեան, ըստ, պայմանագրութիւն մը կընքած է Պրանսայի, Գերմանիոյ եւ Ռուսիոյ հետ Նորվեգիոյ թագաւորութեան ամբողջութիւնը եւ անկախութիւնը պահպանելու համար: Այս պայմանագրութեան բնագիրն ալ իսպտեն ժամու ձեզ պիտի ներկայացուի: Ինչ տուած ձեզ ներկայացուած թղթակցութիւնը ձեզ պարզեց միջազգային խաղաղութեան Լահէի: Համաժողովին արդիւնքները այդ համաժողովը վերջին հոկտեմբեր ամսոյ մէջ գոցուեցաւ: Հօն վերջնականապէս կայացած զանազան պայմանագրութիւնները ցոյց կուտան այն յառաջդիմութիւնները որոնք իրականացան եւ այս վարկեանիս իմ կատարարութեանս ժամանակը ոչ չաղորու թիւնս տարկան են: Այդ պայմանագրութեանց մէջ էն կարեւորներէն մին է միջազգային իրաւարար ատեա

Ա. ԵՐԱՏԱՆԱՆ

121

ԱՆՍՏԱԿԱՄԵՏԸ

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՆՍՏԱԿԱՄԵՏԸ

(Շար. Աստուծոյ քրիստ)

— Ասկից կո տաք ինձի հաց, պանիր եւ քանի մը կոոր բաներ:
— Է՞ս:
— Ես կ'ուզեմ զանոնք: Զետու կատաղորդեմ ձեզ ալ անոնց մօտ, լեռան մը ետին: Տարած ուտելիքներս կը յանձնեմ ու եղբայրս կ'ազատեմ: Եղա՞ւ: Մի առկա: Եւ ատեն սուրիչ մը ունիմ, լուկարձ կը ջալեմ ու ձեզ կը կանչեմ: Եւ օրպէս զի զուք գիւս

բութեամբ սպաննէք զանոնք, ես կը ջանամ նեղ անցքի մը մէջ տանիլ այդ կեանքները: Որ չը կարենան տեղեկներն երեւալ, ինչ կ'ըսէք: Ես հովիւ մըն եմ, Աղա պէյ, իմ խելքս շատ բաներու չը հասնիր: Գուք ալ մատնեցէք, միակ թէ եղբայրս չազատած յարձակում մը ընէք, հա՞:

— Ըսել է թէ եղբայրդ եւ ոչխարներդ անոնց ձեռքը մնացին:
— Հարկաւ: Ինչ կ'ընայք: Ընել, ես զէնք չուզեմ, բան մը չուզեմ: Եթէ մերժէի, հա՞ու մը պէս պիտի մորթէին զիս: Ա՛խ, ա՛խ սա կեանքս: Երբեք:

Ուտիկաներու հրամանատարը պահ մը մտածեց, զոյժը նետեց ու խորին յուզումով մը մէջ մնաց: Մանր, երկիւղալի ու միանգամայն մահացու հարց մը դրեւած էր իր աղբին: Լիկէ յանձն առնէր հովիւին հետեւն երթալու, պատասխանատուութեան մը ներքեւ կը մնար: Կակառակ պարա-

գային մէջ՝ եթէ երթալու ըլլար, անպատճառ մահն աչքն առնելու էր: Միեւնոյն ատեն, որ մտածէր:
— Հապա եթէ Սան-ճալատի խումբն ըլլա՞ւ, ինչպէս պիտի ազատուի:
Ուստի դողդողալով հարցուց:
— Չօպան պէ, ատ քովի թանկերու մէջ Սան-ճալատ անունով մէկ կը կ'որ մի:
— Կան-ճալատ ըսէ՞ք:
— Հէ՛ս:
— Ինչ գիտեմ, անոնք անուշենին չըսին ինձի, պատասխանեց Աւագա կապեալը:
— Շատ ո՞ր է ինչ:
— Չէ, Աղա պէյ, երեսուն հօցի չը կային:
— Ինչ հազուադէպ էին:
— Շատա՞ր՝ մեր քուրտերու պէս աղուոր հազուադէպ ունէին եւ զինուած էին:
Ուտիկաներու հրամանատարը քիչ մը որոտ տուաւ: Իմացած էր որ Սան-ճալատի մարդիկ Ռուս քաղաքներու

պէս հագուած էին ու գլուխին կար սրմայ թիկերէ հիւստած զտակ մը: Ուրիշն ատ խումբը կեանքներու նոր խումբ մըն էր, որ անպատճառ օձիքը ձեռք պիտի տար: Այս երեւակայական մտածումն ընելով՝ տաքի եւ լուռ ուստիկան մը կանչեց ներս:
Հիւսնի, չուտով քառասուն հատ հաց, տաք կտոր պանիր ու քիչ մըն ալ ժամիկ առ բեր հոս, հրամայեց ան խիստ ձայնով մը: Եսայէ, ով որ չը տալիք կընէ ձեռնով զէջիկը զրկէ: Երկու ժամէն պատրաստ պիտի ըլլան ըստմեներս, հասկցա՛ր:
— Հասկցայ, զողջապ ուտիկանը փողոյային անարդ չուէի մը պէ՛ք կ'ըսէ: Ու անպարտաւոր մը դուրս ելաւ: Գործաւոր ուտիկաներու հրամանատարը սկսաւ հարցումներ ընելու:
— Չօպան, զուր քանի տարի է որ աս լեռներու մէջ կ'ապրիս, ըստ անի:
— Ինչ ըսեմ, աս եղաւ 30 տ ըրէ

նի մը մեծ սկզբունքը, եւ իմ կառավարութիւնս այժմ կը քննէ խնդիրը հրաւերի մը որ պիտի ուղղորդէ զիստաւոր ծովային պետութեանց Լոնտոնի մէջ համաժողով մը գումարելու մասին, յատկապէս աշխարհային պայտիսի մասին, որոնք միջոցներ համաձայնութեան մը գտնու համար միջազգային օրէնքի ինչ ինչ կարեւոր կէտերու մասին որպէս զի ատենը հաստատութիւն էր իրաւունք թուրքիոյ մասին մայն սա խօսքերը արտաշնեց:

«Մակեդոնական նահանգներու մէջ քրիստոնեայ եւ մահմեական ընկերակցութեանց գտնուած պայմանները տարբերուած չեն: Զանազան ազգութեանց հրոսակախուժները կը շարունակեն իրենց անկարգութիւնները, եւ կացութիւնը ըստ վերջինս կը պատճառէ Եւրոպական մեծ պետութիւնները համաձայնած են թուրք կառավարութեան ներկայացնելու ծրագիր մը ամփոքելու համար իրաց վիճակը եւ տղո՞ր օրէնքեր մանկու համար անկարգութեանց գիտաւոր պատճառները»:

Յետոյ թողաւ որը Գուկոյի, Ն. Նահանգներու, Գաւառայի եւ ճարտարական գաղթականութեան մասին հակիրճօրէն խօսեցաւ: Եւ ամենէ վերջը ցաւ յայտնեց Հնդկաստանի մէջ մասին մէջ ճարտարութեան պատճառաւ տիրող թշուառութեան եւ տարախօսիկ էրականութեանց համար ու բաւ «օգնութեան միջոցներ ձեռք առնուած են թէ ժողովուրդին կողմէ եւ թէ իմ վարչութեան անդամներուն կողմէ»:

Յետոյ անցաւ ներքին խնդիրներու եւ Բաղլաման աշխատութեանցը համար Ամենակարգին օգնութիւնը հայցելով վերջացուց գոհածաւոր:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Ի Ն

Տիկնանց Կրթասիրական Ընկերութիւն
Ոսֆիա, 21 յունիւ. 909

Մեր ազգային վարժարաններու խեղճուկ վիճակէն տիկիններն ալ ազդուելով, սկսան զբաղիլ կրթական գործերով: Վերջերս Տիկին Ասլանեանի նախաձեռնութեամբ կազմուած է Տիկնանց մասնախումբ մը որուն առաջին ձեռնակը եղած է, երեկ կիրակի օր կէս օրէն վերջ կաշարած ժողովը, որուն հրաւիր-

ուած էին 50է աւելի տիկնայք, բայց դժբաղդաբար, ցաւալի է ըսել ներկայ էին միմիայն 12 տիկնայք: Մասնախումբի նպատակն է կազմել կրթասիրական ընկերութիւն մը, որ թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս օգնէ տեղւոյն աղջկային վարժարանի բարելաւման եւ տղայաց կրթութեան: Ժողովը յետագայում էր հետեւեալ կիւրակէ ներկայներու թիւը աւելի բլլալու համար, Հոգ չէ թէ նուազ թուով Տիկնայք ներկայ են եղած, զովքի է տիկնայց ձեռն սրկը, որ յառաջդիմութիւն կը խառնայ ապագային մէջ:

Ուստի շնորհաւորելով Տիկնանց այս կրթասիրական ձեռնարկը, յաջողութիւն կը մաղթենք, եւ կը յուսանք որ նոյնանման ընկերութիւններ կազմակերպու առթիւ, ուրիշ քաղաքներու տիկնայք օրինակ կառնեն այս ձեռնարկէն:

Կր խոստանամ յառաջիկային տեղեկացնել անոնց գործունէութիւնը:

Թ.Ղ.Ա.Կ.Ի.Յ.

ԲԱՐԻՁԷՆ ԱՐՁԱԳԱՆՔ

Օրուան կարեւոր հարցն է հայ շրջանակներու մէջ թէ «Հալոս հայուն հետ պէտք է միանայ, թէ Թուրքին հետ» եւ այս հարցը յուզուած է Բարիճ գումարուած Օսմանցիներու մէջ ժողովին առթիւ որուն մասնակցած են 5 հայեր, 17 թուրքեր եւ մէկ երկու ուրիշ ցեղեր: Հայերը կը բազկանային մեծ մասամբ Դաշնակցական կուսակցութեան Արեւմտեան Բերքի անդամներէն, Ներկայացուցիչը մը Արեւելեանի կողմէ եւն: Հին Հնչակեանները մերժեցին մասնակցելը վիճաբանելի ընթացքով (Ներք յօդուած մէկ կողմ ձգելով միայն ժողովին թուրքերուն հետ եւ կուրդի տիրող ուժերին դէմ) հակառակ ինքն լով իրենց ծրագրին: Վեպկազմալը (Արեւելեան) թէեւ Պ. Զօպանեանին գրած էին Ամերիկայէն, սակայն Պր. Զօպանեան մերժեց՝ չուզելով ունէ կուսակցութեան մը ներկայացուցիչ ըլլալ: Պ. Զօրազ մերժելով մերժեց

- Էն:
- Չորս եթիմներ ունիմ:
- Յետոյ:
- Էտոնք չեմ կրնար անօթի մեռցնել:
- Ո՞վ կասէ որ զ'էտոնք անօթի մեռցուր:
- Ինչ Զապթէն ալա:
- Ինչ կասէ:
- Մուրալով քի.բալով տուղ մը ժափիկ չինամ եմ եթիմներուս, եկեր կասի թէ՛ Ազան էտ տըղը կուզիտ:
- Հա էտ էք ցաղ, սէնի կիտի կեպուր, ինչի՞ կը մոռաս, թող սատկելու եթիմներդ ժափիկ չստան չեմիմ:
- Հ.յոսէ զուրա ելիր ժափիկ էլ Զապթիէն տուր:
- Զիմ տար:
- Զե՞ն տար:
- Զէն:
- Ալ զգ.՝.հ, դուն ծծեմ կերած ունիտ:
- Զուանով էլ կախելու էլնիս, նո-

մասնակցութիւնը այդպիսի ժողովի մը իր երեսուն տարիներէ ի վեր պաշտպանած սկզբունքին բոլորովին հակառակ նկատելով այդ գումարման նպատակը: Պ. Զօրազ աղգին վեպակար կը համարի ժողովին թուրքերուն որ հարիւր տարեկան կը կողմին միանայ, մարտիկու համար հարիւրին 90ի դէմ, որոնց զուգար կը գտնուի Սուլթան եւ թուրք կառավարութիւնը:

Միթէ՞ սա կարեւոր հարցն է թէ հայը ինչո՞ւ չի միանայ կամ դէ՞ չհամաձայնի հայուն հետ եւ երթայ թուրքին գիրկը ինչո՞ւ ոչ միայն օգուտ մը քաղելու համար իր հայրենիքին այլ վեպակար՝ չըսելու համար աղետալի՞ գառնալու համար անոր:

Գծկարէի անդամները իրենց համաձայնութիւնը, տօնեցին պատգամով մը գեկտ 30ի դեպքը: Թուրքերը ուրախ են որ Հայերը իրենց կողմը դարձուցին իսկ Դաշնակցութիւնն ալ թուրքերը իրեն գործիք պիտի ընէ եթէ երբէք թուրքը գործիք դառնայ սակայն իրենց ձեռքը:

Յոյները չեն մասնակցած որովհետեւ Դաշնակցական կուսակցութիւնը Մակեդոնիոյ մէջ Պուրկարաց հետ կը գործէ Յունաց դէմ:

«Աստուրներ» Թ.Ղ.Ա.Կ.Ի.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Տիգրան էֆ. Եռասուֆեան որ թուրքառապի ենթարկուած էր վերջերս, մեռած է իր Շիշլի բնակարանին մէջ, Հանգուցեալը պետական պաշտօններէ զատ շատ մը աղջկային պաշտօններ վարած է եւ Ատենապետը եղած էր Բաղլամա՞ն:


— Աղէքսանդրիայէն Բարթոլ վաշա 1500 ֆր. զրկած է Պատրիարքին Արմաշի Դպրեվանքին համար:

Վանայ առաջին տեղապահը ձմրան խոտութեան առթիւ տեղւոյն աղբառներուն ի նպաստ տնօրինութիւն մը խնդրած է Պատրիարքարանէն:

— Կրէտէն մեզ կը գրեն, թէ վերջին անգամ կղզիին հայոց հովիւ կարգուած Տէր Սահակ քհնյ. Դիմաստեան լքելով իր հօտը, Ա-

ղէքսանդրիա անցած է, առանց Պատրիարքարանէն արտօնութիւն ստանալու: Կրէտէի հայ գաղութը այժմ պէտք ունի անձնուէր հովիւի մը:

ՎԱՌՆԱՅԻ ԱՂԻԱՏԱԻՆԱՄԸ




Վարչութիւնն շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրներն:

Շրջուն գանձանակէ՝ ձեռամբ Տիար Դազարոս՝ Ասլանեանի՝ եւ Արտաշէս Ստեփանեանի 47 20. Հէ. Միւրան Զուպուքեանի եւ Վառձապուհ Բաշահանի 51 80. Տիգրան Յակոբեանի եւ Լեւոն Սէմէրճեանի 39 50. Արամ Գաղապեանի եւ Սեդրաք Յովհաննէսեանի 22 50. Խաչիկ Թորոսեանի եւ Տայի Գառնիկի եւ Ռէյիդեանի 34 75. Լեւոն Թափալեանի եւ Դազարոս Ասլանեանի 42 40:

Մկրտութեան առթիւ Տիար Զայի Զանկի, լեւոն 60 անգ. Գեորգ Գիւրգեան 1. Արմենակ Բէշտիմճեան 1. Յակոբ եւ Մամաս 1. Յովհաննէս Նազարեան 2. Նշար Խաչիկեան 2. Յովհաննէս Կոյսեան 1. Յարութիւն Թիմուրեան 4. Դազարոս Մանուկեան 50 անգ. Մանուկ Թաշեան 50 անգ. Դրիգոր Յակոբեան 2. Դ. եւ Կ. 1:

Անուան առթիւ Տիար Զօնիկ Մկրտիչեան 5. Մուքոֆլը Մկրտիչ Զամբառուեան 50 անգ. Յակոբ Մ. Սարգիսեան 1. Պողոս Դաշնեան 2. Մարտիրոս Բահանայէ 1. Նիկողոս Զիւնտ 1. Մելքոն Գեորգեան 2. Ե. աղբի Կիւմուշեան 2. Անգրանիկ Շիշմանեան 2. Յակոբ Յարութեան 2. Գեորգ Ս. միրեան 2. Պողոս Գեորգեան 50 անգ. Յակոբ Հէ. Կարապետեան 2. Յովհաննէս Թորոսեան 2. Օսնիկ Աղամիս 1. Յովհաննէս Մուկոֆլը 1. Գեորգ Կարապետեան 1. Պողոս Զիւնիկեան 2. Յակոբ Աղամիս 2. Պողոս Կարապետեան 1. Յակոբ Սէֆերեան 5. Յակոբ Կեօզիւպեան 2. Յակոբ Ս. 5. Յակոբ Գուրգուսեան 2. Կարապետ Անէմեան 5. Մկրտիչ Աւետիսեան 3. Կարապետ Յովակիմեան 50 անգ. Հաճի Կարապետ Յակոբեան 1. Մկրտիչ Յարութեան 1. Արթուրոս Զանայէ 1. Կարապետ Շիրինեան 1. Մկրտիչ Աւետիսեան 2:

Կնիք ԳՈՐԾ. ԺՈՂՈՒՅՈ



որ ատ լեռներու մէջ կը թափափոր ոչխարներուս հետեւէն, նկատել տուաւ տուաւ: Աւագակապիտը:

— Ըսել է թէ՛ ժայռը քարը, ձորն ու ապառաժը ծանօթ են քեզի:

— Հ.յ. հայ, եթէ ոչ կրնամ հովուութիւն ընել: Մինչեւ անգամ գալերուն ոսկից գան ինծի յայտնի է:

Աս պահուն դուրը բացուեցաւ ու արցունքներու մէջ շարժուած կին մը ներս մտաւ, որ հազիւ 40ի մօտ տարիք մը ունէր:

Թշուառ կինը լսողով ծածկած էր քերտը եւ կը ջանար զսպել իր հեծկտանքները:

— Ի՞նչ կայ հարցուց ոտսիկանն, որ իրաւաստարը հայերէն լեզուով մը:

— Ոտացդ մեռնիմ աղա, թոթովից կինն ու չը կրցաւ շարունակել:

Աստ տէ՛, քահպէտնէ, պոռացաւ նարգ թուրքը:

— Ես որքովէրի կին մըն եմ:

ըէն եթիմներուս նափաղան չեմ տար քեզի:

Ոստիկաններու հրամանատարը կատաղութեամբ մը ոտքի ելաւ եւ ապակիով մը զսպելու խեղճ կնոջ երեսին:

Կիւր վզէն անջատուած հաւու մը պէս թփաւաց ու ինկաւ տախտակամածին վրայ: Բիթէն սկսաւ յորդալիւն մը պոթիկալ, որ կերպարանքը ծածկեց:

Իսկոյն երկու ոստիկաններ ներս մըտան ու քաշկռտելով դուրս հանեցին զանի:

— Ահա կեպուր է քալթաքը, չըսեմի՞ր որ, բացաղանց ոստիկաններու հրամանատարը:

Աւագակապիտը՝ այս դարձուրի միջոցէպին ի տես՝ կը զոգոր բոլոր մարմնովն ու կը ջանար ինքզինքը զսպել:

Վերջապէս գիշերը բաւական յառաջացաւ ու ամեն բան պատրաստ էր:

Աւագակապետը գաղտնի ճամբայով

մը ոստիկաններու հրամանատարն ու հեծեալ զինուորներու ջոկատը գէպի լեռը առաջնորդեց: Լեռան թիկունքը խոր ձորակ մը կար, որ երթալով կը մեծնար ու անագին խորտառներու մէջ կառնէր ճամբորդները: Հոն մըտացուց զանոնք:

Գիշերուան մթութիւնը, ժայռերու ցցուածքը, ձորին օձապոյտ գորշ ու լեռնային տարաքի մը ձգեցին Ազգային սիրտը: Անիկա կարծեց թէ անյատակ անդունդէ մը զգլի վար կը խորատուղէր... Կեանքաբար զոգողով հարցուց.

— Ուր կերթանք Զօպան:

— Մենք, վրայ բերաւ Աւագապետը:

— Այո:

(Շարունակելի)



